



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

6
ԱՂՕԹ ԱԳԻՐՔ
ՍՐԲԱԶԱՆ ՏԵՂԵԱՅ

Բ • ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ




Ի ՏՊԱՐԱՆԻ
ԱՌԱԲԵՆԼԱԿԱՆ ԱԹՈՒՈՅ
ՍՐԲՈՅ ՅԱԿՈՂԲԵԱՆՑ
ՅԵՐՈՒՍԱՂԷՄ

1877

203

Մ-36



203
5-36 48
ԱՂՕԹԱԳԻՐԻ

ՄՐԲԱԶԱՆ ՏԵՂԵԱՅ

200
Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

197-ԱՂ

ՀՐԱՄԱՆԱԻ

(1004/16498-58
19048)

ՊԱՏՐԻԱՐԻ ՄՐԲՈՑ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

Տ. Տ. ԵՍՍՅԵԱՅ

ՄՐԲԱԶԱՆ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍԻ



ՅԵՐՈՒՍԱՂԷՄ

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՌԱՔԵԼՈՎԱՆ ԱԹՈՐՈՑ

ՄՐԲՈՑ ՅՍԿՈՎԵՏԱՆՑ

-1877-

Handwritten signature



Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

Տ. Տ. Գ Է Ո Ր Գ Ա Յ

Վ. Ե Հ Ա Փ Ա Ռ Ի Կ Ա Ք Ո Ղ Ի Կ Ո Ս Ե

Ա Մ Ե Ն Ա Յ Ն Հ Ա Յ Ո Յ

ԵՒ

Ի Պ Ա Տ Ր Ի Ա Ր Բ ՈՒ Թ Ե Ա Ն Կ Ո Ս Ա Ն Ն Ի Ն ՈՒ Պ Ո Լ Ս Ո Յ

Տ. Տ. Ն Ե Ր Ա Ն Ս Ի

Ս Ր Բ Ա Ջ Ա Ն Ա Ր Բ Ե Պ Ա Ս Կ Ո Պ Ո Ս Ի



Յ Ա Ռ Ա Ջ Ա Ր Ա Ն ՈՒ Թ Ի Ի Ն



Ա Յ Օ Յ Ի տ ս Կ Ր Է Լ ջ Ի մ Ե ու տ ն գ ը ն Յ Ե ր ց ս ց :


Այս անդամ սոյն աղօթագիրքը աշխարհաւ ընդու աւ հրատարակելնուս պատճառը չէ թէ աղգերնուս մէջ աղօթագրքի պակասութիւնն է, այլ որպէս զի սրբազան տեղիքը շրջած ատենդ իւրաքանչիւր տեղին ինչ ըլլալը գիտնաս և հոն կատարուած տնօրէնութեան քու անձիդ հետ ունեցած վերաբերութիւնը ճանչնաս, և այն տեղերուն աղօթքները ամիսի գիտնաս. Եւ որ գլխաւորն է՝ մեր մարդասէր Փրկչին մեզ համար ըրած երախտիքները տեսնելով մարդկութեանդ պարտքը սորվիս, կրիցդ առաւելազանցութիւնը շափաւորես և Փրկչին ընթացիցը յարմարիս, այն Փրկչին, որ ընդհանուր մարդկութիւնը մէկ զանգուած մը ընելու համար աշխարհք եկաւ, եւ սիրոյ սքանչելի օրէնքը իւր անարատ վարքովը մեզ սորվեցուց :

Ուստի այս աղօթագիրքը գործածէ իբր
սլատմութիւն, իբր աղօթք և իբր բա-
րոյական խրատ • որոնցմէ եթէ հոգևոր
և բարոյական շահ մը ստանաս, ևս ալ
իմ վարձքս ընդունած կ'ըլլամ:

Մ. Վ. Մարկոսեան 3



Արքայն Յակոբայ Տաճարին մէջ :




Երեքորդեան մի տէրութիւն :

Օրհնեալ էս տէր Աստուած
 մեր , որ պարգեւեցեր ինձ այ-
 սոր ժամանել քու աստուածա-
 շքիկ Տօրիսնական սուրբ եր-
 կիրդ , որ մեր հոգւոյ վրիւ-
 թեան տեղն է . և հիմայ կեցած
 այս սուրբ Տաճարիս մէջ եռան-
 դուն սրտիւ բաղկատարած մար-
 դասէր բարերարից առջև ծունր
 դնելով , արտասուալից աչօք կը
 պաղատիմ . դարձուր աչքերդ
 վերաւորեալ դերիս վրայ , որ
 անչափ մեղքերու ճառայելով

աստուածային խնամեցող պահ
 պանութենէն զրկուեցայ և մեր
 հողւոյ թշնամւոյն ձեռքը գերի
 ինկայ, որ անդ թու թեամբ կը
 տանջէ հողիս և օր ըստ օրէ կը
 հեռացունէ քեզմէ: Ուստի կ'աւ
 զաչեմ բարերար Տէր, դարձի՞ր
 դէպ ՚ի մեղաւորիս, ու վրիէ
 զիս իմ անթիւ մեղքերէս եւ
 քու ամենազօր պահպանողա՞ջ
 հովանի ըրէ իմ վրայ, որպէս
 զի կարող ըլլամ այսուհետեւ
 առանց մեղաց քու ետեւէդ
 գալ, ու մեզի համար խոստաւ
 ցած սուրբ արքայութեանդ մէջ
 զբեղ Հօր եւ սուրբ Հոգւոյն
 հետ փառաւորելու արժանի ըլ
 լալ. ամէն:

Գլխադիր սուրբ Յակոբ աստուծոյն
չիրմին ջրայ :




Հովիւ քաջ զանձն գնէ 'ի վերայ ոչխարաց :

Տէր Աստուած բարերար և
փրկիչ հոգւոց մերոց Յիսուս
Քրիստոս, ես անարժանս քու
խնամքովդ արժանի եղայ այս
սուրբ երկիրս դալու, և հիմայ
կեցած սոյն պատուական արիւ-
նամս սուրբ Յակովբայ գլխոյն
առջեւ, որ քու սիրոյդ համար
մահուան դառն բաժակը քաղչ-
րու թեամբ ըմպեց. քեզ երկրը
պագերով 'ի խորոց սրտէ կ'աղա-
չեմ, եւ որովհետեւ մեզացս
բաղմութենէն չունիմ համար.

ճակութիւն բարերարիդ երեսը
 նայելու, ուստի սոյն երջանիկ
 Գլխագիր առաքելոյն բարեխօ-
 սութեան միջոցովը կը ներկայա-
 նամ' և ողորմածիդ ոտքը ինկած
 դ'թութիւն և շնորհք կը խընդ-
 րեմ': Կաղաչեմ Աստուած իմ,
 ողորմէ ինձ ու ներէ իմ անհա-
 մար յանցանքներս, որ սուրբ ա-
 լազանի ծննդեանս օրէն մինչև
 այս բոսկէիս քու Աստուածու-
 թեանդ առջեւ մեղանչեր եմ.
 քու սուրբ շնորհքդ խրկէ ինձ և
 ճշմարիտ իմաստութեան ջհհդ
 իմ մտացս շնորհէ՝ որ առաջ-
 նորդ ըլլայ ինձ այս կենցաղոյս
 վտանգաւոր ճամբորդութեան
 մէջ և չըթողու որ քու կենսա-

ռիթ պատուիրանացդ ուղիդ
 ճանապարհէն աջ ևահեակ խո-
 տորիմ. այլ անխոտոր քու ետե-
 լէդ գալու արժանի ըլլամ: Աս-
 տուած իմ, ինչպէս որ սոյն որ-
 դին Զբեդեայ Գլխագիր սուրբ
 Յակովբ առաքելը և բոլոր ար-
 դարները քու Աստուածային
 սիրովը վառեցիր, կ'աղաչեմ,
 բորբոքէ այդ սիրոյ հուրը իմ
 սրտիս մէջ ալ. որպէս զի կա-
 բող ըլլամ անոնց պէս աներ-
 կիւղ պատերազմիլ իմ վատ կը-
 րիցս բռնութեանց դէմ, եւ
 քու զօրութեամբդ յաղթելով
 արժանի ըլլամ յաւիտենական
 փառքն ու երանութիւնները
 վայելելու:

Աւագ սեցանին առջև, Տեսունեցօր
չիրմին վրայ :




Եւ մատուցանէին նմա մանկախա :

Ո՛վ ամենագուժ Արարիչ,
Տէր եւ Աստուած իմ Յիսուս
Քրիստոս, դուն որ մեր սիրոյն
համար մեզ նման մարդ եղար,
և մեր փրկութեան համար այս
սուրբ Քաղաքիս մէջ փրկագործ
անօրէնութիւններդ կատարե-
ցիր և Աստուածութեանդ սուրբ
սիրոյն հուրը բորբոքեցիր քեզ
հետեւիլ ուղղիներուն սրտին
մէջ, որով յօրացած ազատ մը-
նացին խաւարի իշխանութեան

մարեմ և կրկես յաղթելով դէտց
՚ի բեղ գամ:

Ո՛վ քաղցր և երկայնամիտ
Տէր, Տեառն եղբայր սուրբ Յա-
կովբոս առաքելայն բարեխօսու-
թեամբ՝ որ քու աստուածային
ճշմարտութեանդ համար նա-
հատակուեցաւ, ներէ և ջնջէ
անյիշաչար տէրութեանդ միտ-
քէն իմ անյիշելի մեղքերս, սրբ-
բէ կ'աղաչեմ և արդարացուր
հոգիս, որ կարող ըլլամ վայե-
լել քու մեղի համար խոսաա-
ցած արքայութիւնդ, և բոլոր
սուրբերուդ հետ ամենասուրբ
Երրորդութիւնդ փառաւորեմ՝
այժմ և յաւիտեանս յաւիտե-
նից, ամէն:

Մինեական սեզանին առջեւ :




Իւ այլակերպս եղև առաջի նոցա :

Տէր իմ Յիսուս Քրիստոս ,
 դուն որ միշտ բարեաց սպար-
 դեւող ես , ու չես մերժեր հա-
 ւատով քեզ աղաչողաց օրինա-
 ւոր խնդիրը , դուն որ քու մար-
 մնաւոր ծնող Սրբուհի կոյս Մա-
 րիամու կարօտութիւնը լեցու-
 նելու համար՝ լսելով անոր ա-
 ղաչանաց՝ հրեշտակիդ ձեռօք
 մխիթարեցիր . հիմա ես ալ , ո՛վ
 բազմասպարգեւ բարերար Տէր ,
 յիշելով քու գթութիւնդ , ա-
 մօթով և կորագլուխ իմ անհա-

մար մեղքերուս թողու թիւն կը
 խնդրեմ, և անխաչար գթու
 թեանդ ապաւինած վտահեմ
 որ կ'ընդունիմ, միայն թէ ես
 իմ չարիքներս թողում: Գուն
 Աստուած իմ, խոստացար մեզի
 որ եթէ խնդրեմք, պիտի ըն
 դունիմք. ես ալ ահա հաստա
 տուն յուսով ճշմարիտ հաւա
 տով իմ արտասուացս կաթիլ
 ները սուրբ Աստուածածնին
 բարեխօսութեան հետ խառ
 նած կ'ընծայեմ ողորմած Տէրու
 թեանդ: Կ'աղաչեմ ընդունէ
 Աստուած իմ, և անարժանու
 թեանս մի նայիր. շնորհէ ինձ
 իմ պարտքս, ներէ անթիւ մեղ
 քերս, մի հեռանար ինձմէ, մի

ուշտցուներ քու շնորհքդ, մի
 գոցեր ողորմութեանդ դուռը,
 մի քողարկեր շնորհացդ լաւոյն
 ճառագայթները կուրացեալ և
 անպատուար թշուառիս գէմ.
 ամենառատ կամօքդ հաճու
 թիւն ունեցիր նրթեալ թշուա
 ոռիս ողորմութիւն շնորհելու,
 Աստուած իմ: արթուն պահա
 պան խրկէ իմ զգայարանացս,
 որպէս զի քու խնամքովդ պա
 տուարուած ամենեւին չը մե
 ղանչեմ, որով արժանի ըլլամ
 ամեն ատեն ամեն տեղ դքեղ
 Հօր և սուրբ Հոգւոյն հետ միա
 ռաւորել՝ այժմ և յաւիտեանս
 յաւիտենից, ամէն:



Չի ծնաւ ձեզ պսոթ փրկիչ :

Ո՛վ անձառ մարդասիրու
 թիւն , ո՛վ դիտողին բարութիւն՝
 Ասաուած իմ Յիսուս , դուն որ
 յաւիտենական անձառելի փա
 ռացդ մէջ հոգեղէն զուարթ
 նոց փառաբանութիւնը կ'ըն
 դունէիր , այն անհուն բարձ
 րութենէն խոնարհեցար այս ան
 շուք պարին մէջ . դուն որ բոլոր
 տիեզերքը մէկ խօսքով ոչնչու
 թեան խաւարէն երեւան հա
 նելով ստեղծեցիր , հոս իբրեւ

տկար մանուկ ծնար, խանձա-
րուրով պատեցար, և Մսուրը
դբուեցար: Մինչդեռ երկինք
ու երկիր քու Աստուածութիւ-
նըդ չէին բովանդակեր, դուն
Աստուած իմ և Տէր, այս ա-
նասնոց բնակարանը խոնարհե-
ցար, որպէս զի զանազան մեղօք
անասնոց հաւասարած մարդ-
կութիւնը իւր բնական փառա-
ւոր վիճակին վերածես. որպէս
զի մեղօք մերկացած շնորհաց
հանդերձը վերստին հագցու-
նես, և որպէս զի պատուիրա-
նազանցութեամբ զրկուած յու-
սոյն վրայ վերստին հաստատես:


Արդ՝ ես մեղուցեալս ծուն-
կի վրայ ինկած քեզ երկրպագե-

լով կ'աղաչեմ, մարդասէր Տէր,
ազատէ զիս իմ այս թշուառ
վիճակէս ուր վերստին իմ չա-
րութեամբս գլորեցայ, և ուր-
կէ ազատելու յոյսս միայն դու
ես: Հակառակութեամբ, չարա-
մտութեամբ և ատելութեամբս
քու սիրոյդ դէմ միշտ մեղան-
չեցի. անթիւ մեղքերուս ծան-
րութեամբը թշուառութեան
խորխորատին և անյուսութեան
վճին մէջ թաղուած մնացի.
հիմայ իմ հառաչանքներս ու-
արասուքս հովուաց և մոգուց
ընծաներուն հետ կը նուիրեմ
մանկացեալ Փրկչիդ. կ'աղա-
չեմ յոյս իմ Յիսուս՝ շնորհէ ինձ
ալ փրկութեան յոյսը, որով ա-

դատուած արժանի ըլլամ՝ երկ-
 նից յաւիտենական փառքը վա-
 յելելու :



Գեթսեմանի դարտեղին մեջ
Գրիստոսի աջօրհան տեսը :



Հայր անցի դաժախ զայս յինն :


Անկարօտ և ամեն բանի կա-
րող Աստուած և Տէր իմ Յի-
սուս, այս սոսկալի գիշերը սուրբ
Սիօն վերնատան մէջ խոնարհու-
թեամբ առաքելոց ոտքերը լը-
ւանալէդ՝ եւ վերջին ընթրիքը
կատարելով կենարար մարմնոց
և արեանդ սուրբ խորհուրդը
աւանդելէդ վերջը, առաքելոցդ
հետ մէկտեղ այս սարտեղը ե-
կար, եւ հոս երեսի վրայ ին-
կած կ'աղօթէիր առ Հայր և ա-

նոր կամքը կը խնդրէիր և մեր
 փրկութիւնը կը հոգայիր, փոր-
 ձութեան մէջ չլինարու համար
 քու օրինակովդ մեզի աղօթք
 ընել կը սորվեցունէիր: Բայց ես
 աշխարհային աւելորդ հոգերով
 զբաղած և հեշտութեան քնով
 ծանրացած միշտ կը հեղգամ ա-
 ղօթք ընելու. դուն Աստուած
 իմ բարեգութ, շատ անգամ
 բանիւ և դործով ուսուցիր ինձ
 որ աղօթեմ և քու կամքդ ու
 արքայութիւնդ խնդրեմ, իսկ
 ես կամ ընաւ չեմ աղօթեր և
 կամ եթէ աղօթեմ, այն ալ չէ
 թէ քու կամքդ, այլ իմ հաճոյ-
 քըս կը խնդրեմ: Ուստի կ'աղա-
 չեմ, Աստուած իմ Յիսուս, մաք-

րէ զգայութիւններս, սրբէ ու-
 լուսաւորէ միտքս որ սուրբ կա-
 մայդ համեմատ աղօթել գիտ-
 նալով՝ արժանի ըլլամ խնդիրքս
 ընդունելու: Դուն Տէր իմ Յի-
 սուս, մեզի համար արցունք և
 արեան քրտինք թափեցիր. իսկ
 ես իմ ընկերիս բարեացը հա-
 մար փոքրիկ աշխատութիւն մը
 չըրի, թշուառին միտթարու-
 թեան հոգ ու խնա՛ք չըտարի,
 իմ բոլոր մարդկային պարտա-
 ւորութիւններս մոռացայ, խըզ-
 ճիս ծանրութեամբը բեռնա-
 ւորված աստանդական անմխի-
 թար կը շրջիմ: Հիմա Տէր իմ Յի-
 սուս, հոս քու աղօթած ու մխի-
 թարութիւն ընդունած տեղդ

Եկած՝ երեսի վրայ ինկած ար-
 տասուօք և հառաչանօք կը սյա-
 ղատիմ, ողորմէ թշուառիս, և
 մխիթարէ զիս. կամքդ միայն
 կը խնդրեմ Աստուած իմ, ին-
 չու որ դու մեղաւորին կորսը-
 վիլը չես կամիր. ուստի եթէ
 քու բարեսէր կամքդ իմ վրայ
 դառնայ. յայնժամ ես զիս փրո-
 կուած ու երջանիկ կը համա-
 րիմ, որով զքեզ օրհնելու ար-
 ժանաւոր կ'ըլլամ:





Համբուրեցի մատնեա զՈրդի մարդոյ :

Ա Ղ Օ Թ Ք Է .

Ֆրիստոսի բռնուած սեցց :

Ողորմած , գթած և մարդա-
սէր Տէր , քանի որ Կեդրոնեան
ձորին այս կողմն անցած՝ մեր
փրկութիւնը հոգալով կ'աղօ-
թէիր , յանկարծ Յուդային ա-
ռաջնորդութեամբը ղինուոր-
ներու բազմութիւն մը սուսե-
րով և զէնքերով զքեզ պաշա-
րեցին , աւաղակի վրայ յարձա-
կելու պէս բռնեցին , և յան-
ցաւորի պէս կապեցին որ դու
տաւորներու ներկայացունեն :
Այս ցաւալի վայրկենին մէջ

Պետրոս առաքեալը իւր սիրոյն
 սաստկուութեամբը քահանայա-
 պետին ծառային ականջը կըտ-
 ընց, Իսկ դուն, գթառատ Տէր,
 խոնարհուութեամբդ վըէժխընդ-
 ըութիւնը յանդիմանելու հա-
 մար անոր մօտեցար և կտրուած
 ականջը բժշկեցիր : Ո՛հ, ի՛նչ
 քաղցրութիւն և ի՛նչ ներողա-
 մտութիւն, որ կամաւ զինուոր
 ներուն յանձնուեցար, որ քու
 վըայ եկողին և գբեզ նախատու
 զին ականջը բժշկեցիր, և որ
 Յուդայի նենգաւոր համբուրիւ
 գբեզ մատնելու ատեն՝ ապաշ-
 խարութեան հրաւիրեցիր, և
 այն դառն գիշերուան մէջ գը-
 թութիւն ու մարդասիրութիւն

գործեցիր, իմ ամարդութիւնս
 և անզգամութիւնս յանդիմա-
 նելու համար :


Իսկ ես, Աստուած իմ, շատ
 անգամ քու սուրբ սիրոյդ հա-
 կաւակ փոքր զրկանքներու ջը
 համբերելով չարիք խորհեցայ,
 վըէժ առնելու աշխատեցայ, կը-
 ըիցս հետեւելով գաղանացայ
 և գթութիւնը մոռացայ. իրա-
 ւունքը անիրաւութեան՝ ճշմար-
 տութիւնը ստութեան մատնե-
 ցի, որով չար Յուդային համա-
 կերպած եղայ :

Սակայն հիմայ, Աստուած
 իմ, տեսնելով և յիշելով քու
 անչափ սիրոյդ սրտաճառաւ և
 ճշմարտութեան համար կրած


անտանելի նեղութիւններդ, ա-
մաչելով իմ շարեացս և աննե-
րող վատ բնութեանս վրայ,
ողջմամբ և արտասուօք Բարե-
րարիդ ոտքը ինկած՝ թողու-
թիւն կը հայցեմ. այս քարե-
րուն և հողերուն վրայ, ուր
քու ոտքերդ կտեցին, դառն
արտասուք թափելով գթու-
թիւնդ կը խնդրեմ, և կ'առա-
ջագրեմ որ անգամ մ'ալ քու
կենաց առաջնորդող ճանապարհ-
հէդ չը շեղիմ, որով արժանի
լլամ քու անձառ սէրդ վայել-
ելու. ամէն:




[Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page.]



Հրեշտակադէտ, որ Աննա բահանայտ-
 ցեալին տունն է եւ Յիսուսի առաջին
 բանսց :



Ո՛հ, անճառելի է քու մար-
 դասիրութիւնդ Աստուած իմ
 Յիսուս, սակայն սոսկալի է նաև
 մարդկան անգթութիւնն ու ա-
 պերախտութիւնը. վասն զի դու
 անմեղ գառինման հեղութիւն
 ու խոնարհութիւն կը ցուցու-
 նես, անոնք վայրենութիւն և
 դաղանութիւն կ'ընեն. հերիք
 չեն սեպեր սուրերով և բիրե-
 րով անպարտականիդ վըսյ գալ




Այդպէս պատասխանի տուս
 քահանայապետիդ :


և բռնեցրդ գատաւ որն երու մատ
 նելով մեռցունելու եւս կ'աշ
 խատին . կը սարսափիմ և կը դո
 ղամ քանի որ կը յիշեմ՝ թէ հոս
 Աննա քահանայապետին առջև
 դատուած միջոցիդ՝ անոր ծա
 ռայն , որուն երեսուն և ութ
 տարուան անդամալուծութիւ
 նը բժշկեցիր , չսոսկալով քու աս
 տուածային պատկառելի դէմ
 քէդ և չամաչելով իրեն ըրած
 երախտիքէդ , յանկարծ սաստիկ
 ապտակ մը կը զարնէ : Իսկ դու ,
 ով անձառ խոնարհութիւն , դու
 ջը պատժեցիր զինքը . այլ իմ
 փրկութեանս համար համբե
 րեցիր . բայց ես ապաշնորհ թը
 շուառս քու սիրոյդ և բուն իսկ

իմ օգտիս համար բնաւ իմ կա
 մացս բռնութեանց համբերե
 լով կրկցս յաղթած չեմ . միշտ
 իմ նողկալի մեղքերովս , նմա
 նեացս հետ ունեցած ատելու
 թեամբս այն չար ծառայէն ա
 լելի քու բարերար սիրտդ վըշ
 տացուցած եմ :

Բայց հիմայ մեղուցեալ ան
 ձովս այս սոսկալի տեղը դետին
 ինկած Բարերարիդ ոտքը համ
 բուրելով թողութիւն կը խորնդ
 րեմ , և մարդասիրական գթու
 թեանդ վրայ վստահացած՝ կը
 հաւատամ որ մեղաց թողու
 թեան հետ համբերութիւն և
 ժուժկալութիւն ալ պիտի ըն
 դունիմ , որով կենացս մեջ առա

քինութեամբ և սրբութեամբ
 ապրելով, արժանի պիտի ըլլամ
 քու սուրբ տեսութեանդ յա-
 ւիտեանս . ամէն :





Երբև 'ի վերայ աւագակի՝ ելլք
սուսերօք և բրօք :

Ա Ղ Օ Թ Ք Թ .

Նոյն տեղը :

Ո՛վ փրկիչ իմ Յիսուս Քրիստոս, ինչ անձառելի մարդասիրութիւն է այս, որ փառացի ամբողջն խոնարհեցար և մարմին դդեցար, որ մեղաւորիս հոգւոյն փրկութեանը համար սոսկալի տանջանքներ կրել հաճեցար, որ կամուս յանձնուեցար քու վրայ եկող զինուորներուն, որ երբէք չք հակառակեցար զանոնք հարածելով, որ հլութեամբ հոս Աննա քահանայապետին առջև դատուելու եկար :

Բայց ինչ դատաստան, ո՞վ
անդգամութեանս, անպարտ
տեղը առանց յիսաս մը գտնե-
լու, քեզմէ բժշկուող երեսուն
և ութ տարուան անդամալըծը
ապերախտութեամբ քու աս-
տուածային սրտկառելի դէմ-
քիդ զարնելու կը յանդգնի. ու
բուն այս չարութիւնը սկիզբէն
գիտնալով հրամայեցիր որ եր-
թոյ ու ալ չը մեղանչէ, բայց
ինքը մոռնալով քու պատուէրդ
և իսպառ ուրանալով ըրած բա-
րերարութիւնդ, այն սոսկալի
ախոր գիշերը յանդգնեցաւ այս
չարիքը հատուցանել երախ-
տեացդ փոխարէն.

Ահա՛ ես թշուառացեալ գե-

րիս ալ ճիշտ այն չար ծառային
նման, քու անչափ երախտիք-
ներդ մոռնալով և սիրոյ սա-
տուէրդ չը յիշելով, ընկերիս
հետ ունեցած վատ ընթաց-
քովս բարերար Տէրդ միշտ վըշ-
տացուցած եմ: Ուստի հիմայ
այս սուրբ բանտիս մէջ երեսան-
կեալ կ'աղաչեմ, ո՞վ Աստուած
ողորմութեան, գթաս՝ մեղաւո-
րիս թշուառութեանը վրայ և
օգնելով տկարիս՝ հրաման տուր
ետեւէդ գալու: Իմ փրկու-
թիւնս օր օրի մի ձգեր մարդա-
սէր Տէր, կ'աղաչեմ. գթու-
թիւնդ կը խնդրեմ. փութաս
Տէր իմ, որ մեզքերուս բեռ-
ները չըծանրանան վրաս և զիս

յուսահատութեան մէջ ձգե-
լով քու անձառ տեսութենէդ
չըղրկեն . առ իս դարձիր գթած
Տէր , նայէ աղէխարչ հառա-
չանքներուս ու քու սրբութեան
աթուէդ քաղցր աչօք նայէ քու
անարժան ծառայիդ վրայ , ջնջէ
կաղաչեմ , և մի յիշեր իմ ա-
նառակ վարքս՝ որով դբեզ վըշ
տացուցի . քու չարչարանացդ
արեամբը փրկուած գերի մի եմ ,
մի զրկեր զիս քու աստուածա-
յին տեսութենէդ , որ ես ալ
դբեզ փառաւորելու արժանի
ըլլամ . ամէն :



Քրիստոսի երկրորդ բանսին մեշ
որ կոչիտիայի տունն է :



Ամենակարող Տէր , երբ այս
սոսկալի տեղը ծունկի վրայ է
կած քու անչափ մարդասիրու
թիւնդ կը յիշեմ , երկիւղիւ և
սարսափով կ'պաշարիմ . վասն զի
Աննա քահանայապետին սու
նէն նախատանօք հոս Կայիա
փային բերին , որ արդարու
թեամբ դատուիս : Ո՞վ կուրու
թեան մարդկան , հարցուցին՝
ճշմարտութիւն լսելու , և երբ
քու Աստուածային բերնովդ



Ածին և մուծին 'ի տան քահանայապետին :

Ճշմարտութեան վրայօր խօսե-
ցար, քահանայապետը բարկու-
թեամբ լուսած իւր հանդերձը
պատուեց :


Սակայն Տէր իմ, հիմայ կը
մտածեմ որ ես ալ շատ անգամ
թէ գիտութեամբ և թէ ան-
գիտութեամբ ճշմարտութեան
դէմ ականջ գոցած և իրաւուն-
քը անիրաւութեան փոխած եմ :
Կը յիշեմ նաեւ որ քանի ան-
գամ քու սուրբ օրինացդ հա-
կառակը գործելով արդարու-
թեան, սրբութեան և անմե-
ղութեան հանդերձս պատա-
ւելով՝ մեղաց աղտերուն մէջ
հողիս ասպականած եմ : Կը յի-
շեմ որ հեշտութեան բաժակով

գինովցած՝ կամայցս զգայական
անզուսպ բաղձանաց հետեւե-
լով՝ խղճիս արդար պահանջ-
մանցը դէմ գործած եմ. միշտ
վրիցս հետեւելով և քու սուրբ
սիրոյդ յիշատակը խաբաւ մու-
նալով, Պետրոսի նման ուրա-
ցութեան և գայթակղութեան
վիհը գլորած եմ. և սյսպէս բռ-
լոր չարիքս ու մնութիւններս
յիշելով՝ խղճիս խայթերովք կը
խոցոտիմ : Վայ իմ թշուառու-
թեանը. հոս այս բանտին մէջ
քեզի տուած նեղութեանց,
տանջանաց եւ ծաղրաբանու-
թեանց ամենքն ալ իմ չը յի-
շուելու դանաղան մեղքերովս
կատարած եմ : Սրդարեւ ա-

նարժան եմ կենաց . անարժան
 եմ քու շնորհացդ , վասն զի ա-
 նարժան գտնուեցայ մարդկու-
 թեան . և ինչպէս որ հարկը կը
 պահանջէր , ընկերս սիրելէ վեր-
 ջացայ : Ահա՛ քիչ մնաց փրկու-
 թեան յոյսս բողբոջին պիտի
 կտրէի , եթէ հոս Պետրոսի ու-
 բացութիւնը , զղջումը և թո-
 ղութիւն ընդունելը չը յիշէի :
 Այո՛ , Աստուած իմ , քու մէկ
 սիրոյ և գթութեան նայուածքդ
 թափանցեց անոր սրտին խորը ,
 և զգաց իւր չարաչար կործա-
 նումը . ուստի դուրս ելնելով
 աաստիկ զղջմամբ արտասուեց ,
 և խոստացաւ քեզ հետեւելու :
 Արդ՝ առատագութ Տէր , կ'ալ

ղաչեմ , նայէ՛ թշուառ մեղաւո-
 ըիս վըայ ալ . ողորմէ ապերախ-
 տիս և բարեգործու թենէ զուրկ
 խղճարցս . կը խնդրեմ , թողու-
 թիւն շնորհէ իմ անհամար մեղ-
 քերուս , և քու սուրբ շնորհքդ
 խրկէ որ ալ հեռանամ չարեք-
 ներէ և անարատ վարքով քու
 սուրբ փառքդ տեսնելու ար-
 ժանի ըլլամ . ամէն :





Դո՛ւ ևս Թագաւորն հրէից :

ԱՂՕԹՒ ԺԱ.

Քրիստոսի երրորդ բանտին մեջ՝
սր Պիցատոսի աղարանն է :



Փառաց Տէր, դուն որ երկէ
նի և երկրի արարիչ Աստուա
ծըն ես, ի՛նչ գթութիւն, ի՛նչ
հեղութիւն և ի՛նչ մարդասի
րութիւն է այս՝ որ քու ձեռա
գործիդ սիրոյն համար անոր ա
պերախտութեան այսչափ համ
բերեցիր : Դուն՝ որ Թագաւո
րաց Թագաւորն ես, և մէկ աւ
նարկութեամբ ամեն բան ոչըն
չացունելու կարող. ո՛հ, իբրեւ
տկար մէկը՝ կը տանիս մարդ
կանց նախատանաց :


Հոս Պիղատոսի պալատին մէջ
 յանցանք մը չը գտնալէն վերջը,
 անպարտ տեղը կը տանջուիս ու
 չես խօսիր. Թագաւորական
 Թագի տեղ փուշով կը սլակիս
 ու կը համբերես. տիեղերախը-
 նամ աջդ անարգ եղեգէ գա-
 ւաղան կ'ընդունիս և չես սաս-
 տեր: Հազար անարգութեամբ
 աստուածային սիրող վիրաւո-
 րեցիկն և դու լուռ ու մունջ
 կեցած ճշմարտութիւնդ սիրով
 քան թէ բռնութեամբ տարա-
 ծելու հաճեցար, որպէս զի օ-
 ըրինակովդ զմեզ խրատես եւ
 մէկզմէկ սիրելու վարժեցունես:
 Բայցես, սիրոյ և գթութեան
 անարժան թշուառս, իմ ընկե-


րիս մէկ ծանր խօսքին անգամ
 չեմ համբերած. կամքս և վատ
 կիրքս յառաջ տանելու համար
 ամեն բան զոհած եմ: Իսկ սի-
 րոյդ և առաքինութեան հա-
 մար փոքրիկ զոհողութիւն մը
 անգամ չեմ ըրած: Սրբութիւնս
 արդարութիւն, առաքինու-
 թիւն, կրօնք և ամեն նուիրա-
 կան բան արհամարհած ըլլալով
 խպառ վատթարացած եմ, և
 մարդկութեան կարգէն հեռա-
 ցած շնչաւորներուն հաւասա-
 րած եմ. բանական կարողու-
 թիւնս՝ զոր իբր գերագոյն շ-
 նորհք մեզի պարգեւեցիր, չա-
 րաչար գործածելով բարին և
 օգտակարը, գեղեցիկն ու վա-

յերուշը չորոշելով, մուռթեանց
մէջ տկարացուցի :

Հիմայ՝ Տէր իմ Յիսուս, ըզ
գալով իմ ընթացքիս գէշու-
թիւնը և ճանչնալով գործոցս
վատթարութիւնը, կը զղուխմ
անոնցմէ . նոյն իսկ ես ինձմէ
գարչելով չեմ համարձակիր քու
սրբութեանդ ոտից մերձենալ :
Սակայն գթութեանդ ապաւի-
նած կ'աղաչեմ, մարդասէր Տէր,
փրկագործ չարչարանացդ ա-
րեամբը ներէ ինձ իմ բոլոր մեղ-
քերս : Ահա՛ ամօթապարտ կե-
ցած արդար Գատաւորիդ առ-
ջեւ ալ չմեղանչելու խօսք կու-
տամ . ինչու որ գիտեմ թէ ա-
ռանց իմ զղմանս թողութիւն

չեմ գտնար : Ահա բոլորով սրբ-
տիւ գղջալով կը ջանամ մարդ-
կային տկարութեանս ներածին
չափ զգուշանալ քու շնորհացդ
ապաւինելով, եւ կատարեալ
յուսով թողութեան կ'ըստա-
սեմ, որպէս զի սրբութեամբ
զքեզ փառաւորելու արժանի
ըլլամ . ամէն :





Եւ կապէին զնա և քակէին :

Ա Ղ Օ Թ Ք Ժ Բ .

Սուրբ Յարութեան Տաճարին մէջ
Քրիստոսի չորրորդ բանսը :



Աստուած իմ Յիսուս Քրիստոս, մարդկային մտքէ վեր է քու համբերութիւնդ՝ որ հոս այս խաւար բանտին մէջ ալ հեղութեամբ հաճեցար մնալ պահակներու հսկողութեան տակ. ինչ էր քու յանցանքդ. Տէր իմ Յիսուս : Ահ, անմեղանչելի բռնութիւնդ չէր կրնար մեղանչել. բայց մարդկանց մեղքերը յանդիմանելուդ և ճշմարտութեամբ ու արդարութեամբ


վարուելուդ համար մուրեւալ
մարդկանց սուջեւ յանցաւոր
սեպուեցար: Թշուառին կարե-
կից եղար. կեղծաւորութիւն
ու անաչառութիւն չըրիր, ա-
նոր համար մեղսասէր աշխար-
հը գրեց ստեց, և անոր արբա-
նեակներն սյսքան դառն տան-
ջանքներու մատնելէն վերջը՝ հաս-
այս տխուր բանտին մէջ գրեց
արդիւնցին, մինչեւ վերջին մա-
հառիթ տանջանացդ գործիք-
ները պատրաստեն:


Ո՛հ, ինչ ապերաստութիւն
է իմ բրածս, որ չը ճանչնալով
քու ինձ համար բրած բարիք-
ներդ, իմ փրկութեանս համար
կրած անտանելի տանջանքներդ,

և իմ երջանկութեանս համար
դրած քաղցր օրէնքներդ, չա-
րաչար մեղանչեցի: Անսառիթ
պատուիրանացդ դէմ յանդբ-
նեցայ, անճառելի սիրոյդ՝ ա-
տելութիւն փոխարինեցի. ան-
մտութեամբս, ծուլութեամբս
և մեղկութեամբս թշուառու-
թեան մէջ ինկայ, յուսահատե-
ցայ, և Նախատնամութեանդ
դէմ մեղանչեցի բամբասանօք,
դժգոհութեամբ և անմիտ չա-
րաբանութեամբ, անմահ հո-
գիս վերաւորեցի և Բարերարիդ
սիրտը վշտացուցի: Վաղաչեմ
տէր իմ Յիսուս, եւ խնդրեմ
արտասուալից հեծութեամբ,
ակնարկ մը ձգէ վրաս, և ահա՛

կը սրբուիմ: Հաւատով, յուսով, և սիրով ոտքդ ինկած՝ իմ չարիքներս կը խոստովանիմ, և քեզմէ թողու թիւն կը խնդրեմ: Մի զանաք ինձմէ այս շնորհքը մի անտեսեր իմ աղաչանքներս. գթու թիւն և ողորմութիւն կը հայցեմ մարդասիրէդ: Թէ որ արդարութեամբ գատես, արդէն դատապարտուած եմ. ջնորհք է խնդրածս Տէր իմ, և քու մարդասիրական գթութեանդ ապաւինած կը յուսամ որ կ'ընդունիմ. և կը խոստանամ այսուհետեւ որ քու սուրբ օրինացդ համեմատ մարդավայել ընթացքի մէջ գտնուիմ: Իմ նմաններս սիրեմ, թըջ


նամուտս ձեռքէս եկած բարիքը ընեմ, որպէս զե. քու սուրբ սիրոյդ հրովը բորբոքած՝ քեզի արժանաւոր վարքով յաւիտենականութեան մէջ դքեզ վառաւորերու արժանի ըլլամ. ամէն:





Եւ եդին 'ի դուրս նորա պտտի 'ի փռոց :

Հանդերձ բաժանման տեղը :




Աստուած իմ, ինչպէս սր
բեղ տանջող զինուորները հոս
բու հանդերձդ բաժնեցին, ա-
նանկ ալ մարդկային բնութեան
նախկին թշնամին իմ հողւոյս
չնորհաց, անմեղութեան եւ
ուրբութեան հանդերձը կողոպ-
տելով՝ զիս մերկ ու անպատըս-
տ պար թողուց, արդարոց և սրբ-
բոց առջեւ զիս խայտառակ ը-
բաւ :

Որովհետեւ Տէր իմ, ես յօ-
ժարութեամբ կամոցս զգայա-


կան բաղձանաց հետեւեցայ և
անչափաւոր կրիցս անձնատուր
եղայ, եւ հոգւոյս պիտոյքը
զանց ըրի. վիճակաւ որոշուեցայ
և տարտարոսին յաւխտենական
տանջանաց բաժին ինկայ. վասն
զի մնացայ գթութիւնը, թո
զի մարդասիրութիւնը, հեռա
ցայ առ սքինութենէ, և զրկե
ցայ բոլոր երկնային շնորհնե
րէն:

Արդ՝ Աստուած իմ, դարձնու
աչքերդ դէպ ինձ, և կարեկ
ցութեամբ նայէ վրաս. հագ
ցուր ինձի վերստին քու շնոր
հացդ հանդերձը, որպէս զի մո
լութեան ցուրտէն և հեշտու
թեան տօթէն պատասպարուած

զէշ աղղեցութիւններէ աղատ
մնալով քու սուրբ և հանգիստ
երկնաւոր բնակարանդ մտնե
լու արժանի ըլլամ. ամէն:



Ս. Գողգոթայի ջրայ խաչելութեան
առջև:



Եւ հանին զնա 'ի խաչ:

Ո՛վ անհուն սէր, ո՛վ աղ-
բիւր անսպառ սիրոյ, ի՛նչ է-
րեստիլ եւ ի՛նչ համարձակու-
թեամբ այս սարսափելի տեղիս
մերձենամ. ի՛նչպէս յիշե՛մ քու
անձառ մարդասիրութիւնդ ու
չք պատկառիմ: Ո՛հ, Աստուած
իմ, հոս Գողգոթայ լերան գը-
լուխը խաչափայտին վրայ դբեզ
տարածուած տեսնել. արար-
չադործ ձեռքերդ ու ոտքերդ
բեւեռուած նկատել, և այս ա-

մենք ինձ նման ասերախտ մե-
ղապարտի մը համար ըլլալը գիտ-
նալ և վայրկեան մը չը պատկա-
ռիլ և չը սոսկալ անհնարին է .
թմրած զգացում մի և քարա-
ցած սիրտ մի պէտք է որ այս-
չափ սիրալի մարդասիրութեա-
նրդ վրայ չըղգածի և իւր ասլի-
րատութենէն չը դառնայ :

Ո՛վ Աստուած իմ, Աստուած
գթութեան, Աստուած սիրոյ
և ողորմութեան . ի՛նչ ըսեմ,
ի՛նչ խօսիմ որ լեզուս կապուած
չըթունքներս չեն շարժիր . սար-
սափած կեցեր եմ այս ահար-
կու տեսարանէս : Գուն Արա-
րիչ բնութեան, դուն արարա-
ծոցդ ձեռք հոս խաչի աշտա-

րակին վրայ բարձրացար , որ
պէս զի իմ բժժոտած աչքերս
դքեղ տեսնեն . բարձրացար այս
քառաթեւին վրայ, որ իմ բարձ-
րացած ամբարտաւանութիւնս
խոնարհեցունես , լեռնայեալ
կիւքերս ցածցունես և իմ մե-
ղք խոնարհած հոգիս բարձ-
րացունես : Աստուածային բա-
զուկներդ տարածած կարօտեալ
հօր մը նման մարդկութիւ-
նը գիրկդ կը հրուիրես , որ
պէս զի մեղաց աշխատութե-
նէն փրկես ու հանգստացու-
նես . անպարտական արիւնդ
յերկիր կը հոսես , որպէս զի
այս վրէժխնդրութեան զոհա-
րանէն՝ գթութեան, սիրոյ և

ողորմեն թեան պտուղ բուսցու-
նես :


Սակայն , աւանդ իմ կուրու-
թեանս , որ այսքան շնորհաց
յորդը չը ճանչցայ , այս գերա-
գոյն բարեաց արժէքը բանի
տեղ չը դրի , մեղացս բեռները
ճանրացուցի , և փոխանակ դէպ
ի քեզ սլանալու՝ առջիս բա-
ցուած թշուառութեան եւ
սպականութեան խորխորատը
գլորեցայ : Գուն անձառելի սի-
բով քու անձդ մեր փրկութեան
համար պատարագ մատուցիր .
բայց ես իմ նմանեացս իրաւուն-
քը իմ օգտիս զոհեցի : Գուն
իրարմէ բաժնուած մարդկու-
թիւնը միացունելու համար

Գողգոթայ լերան վրայ երկու
աւաղակաց մէջ իբրեւ յօդ խա-
չեցար : Սակայն ես կամօք հրա-
ժարեցայ . աջակողմեան աւա-
ղակը իբր բարեսիրաց փոխա-
նորդ , ճանչնալով իւր յանցան-
քը՝ կրած պատժոյն արդարու-
թիւն ըլլալը խոստովանեցաւ ,
և քու անպարտ ըլլալուդ վկա-
յեց , որով դրախտին մէջ մշտ-
նելու հրաւերին արժանացաւ .
խսկ ձախակողմեան աւաղակը
ինձ նման անպատկառ գոռոզ-
ներուն փոխանորդը , առանց
իւր չարիքը ճանչնալու և առանց
քու կարողութիւնդ խոստովա-
նելու՝ փրկութիւն կուղէր , ու
բով շնորհացդ լոյսէն զրկուած

իրեն վայելուչ տեղը գնաց :

Արդ՝ Աստուած իմ, խաչիդ
պատուանդանին առջև ինկած,
ամօթոյս վեր նայելու չեմ հա-
մարձակիր . իննայէ՛ տղորմելոյս
և շնորհէ ինձ ալ այն երջանկա-
ռիթ ձայնը լսելու թէ՛ « Այ-
սօր ինձ հետ դրախտին մէջ
պիտի բլլաս », որպէս զի հոն
դքեղ միշտ փառաւորեմ :





Ինչպե՞տ է զնա պատեաց կտաւովք :

ԱՂՕԹՔ ԺԵ .

Պատանաւեցւոյն վրայ :

Բարեաց պարգեւող և շնորհաց բաշխող տէր իմ Յիսուս, խաչափայտին վրայ մարդկան ազգի փրկութեան ծարաւը քաշելով, եւ անոնց ապերախտութեան դառն քացախն ըմպելով անմահ հոգիդ Հօր Աստուծոյ աւանդեցիր : Արեմաթացի արդար ու պարկեշտ Յովսէփն ալ զքեզ իբրեւ շնորհք՝ Պիղատոսէն խնդրեց, ընդունեց և խաչէն իջեցունելով մոբուր կտաւով պատեց :


Այս, Աստուած իմ Յիսուս,
 դուն այս ամենը յանձն առիր
 կամաւ և յօժարութեամբ, որ
 պէս զի չարին հրապուրանօք
 մեղօք պատած հոգիս՝ քու ջը-
 նորհացդ լուացարանին մէջ սրբ-
 բէս մաքրես, անմեղութեան
 իւղովը օծես, և փառացդ լու-
 սաւոր հանդերձով զարդարես:
 Բայց ես իմ յօժարութեամբս
 անմտաբար փախայ, և մոլու-
 թեանց լեռներուն մէջ կորսը-
 ւեցայ, ու քաջ Հովուիդ խնամք-
 ներէն զրկուեցայ:

Ուստի, Բարերար Տէր, կ'ա-
 ղաչեմ՝ շնորհք ըրէ վերատին
 և այցելութեան ելիք մոլորեալ
 ոգիսարիս. աղատէ զիս իմ չա-


րիքներէս, և դարձեալ դէպ ՚ի
 քու երկնաւոր փարախդ առաջ
 նորդէ:



Կենսատու սուրբ Գերեզմանին շրայ :



Մեծի Աստուած, անպարագրելի բնութիւն և անխմանալի զօրութիւն, վերջապէս հաճեցար սոյն անձուկ գերեզմանին մէջ ամփոփիլ, որ անդրև դոց մէջ խորասուզած հոգիս երկինք վերածես : Մատանեալ կիբեցար, որպէս զի Աստուածային զօրութիւնդ կուրացեալ աչքերու ցուցունես . զինուորներու պահպանութեանը յանձնուեցար, որպէս զի ինքնազօր



Զէ աստ քանդէ յարեալ :

յարութեամբդ աշխարհի ան-
հաւատութիւնը յանդիմանես .
անարատ և անապական մտրմ-
նովդ երեք օրէն վերջը ինքնիշ-
խան զօրութեամբ և լուսով Աս-
տուածութեանդ գերեզմանէն
ելսր և մարդկան աղգի հոգին
թշուառութեան և տանջանաց
խորխորատէն ազատեցիր :



Աստուած իմ Յիսուս , ապա-
շնորհ մեղաւորս չը գիտնալով
քու մարդատիրութեանդ չափը ,
չը ճանչնալով երախտեացդ մե-
ծութիւնը , անմտացոյ , հեռա-
ցոյ , որոշեցայ և շնորհացդ լա-
սէն ու յաւիտենական երանու-
թենէն զրկուեցայ : Հիմոյ , հաս
Աստուած իմ , քու կենսատու-

տուրբ գերեզմանիդ վրայ անար-
ժանութեամբ ծունկի վրայ ին-
կած՝ կ'աղաչեմ և կը պաղատիմ .
Թողութիւն շնորհէ իմ անթիւ-
չարեացս , և մի յիշեր սիրոյ պա-
տուիրանիդ դէմ գործած մեղ-
քերս : Գիտեմ Աստուած իմ ,
որ եթէ ուզես՝ կարող ես զիս
որբել , մայրել և յանարգութե-
նէ 'ի փառս վերածել . բայց
գիտեմ նաեւ որ մինչեւ ես չը
կամիմ ու դէպ 'ի քեզ չը դառ-
նամ , մինչև չ'մեղանչելու խոս-
տում չընեմ , քու սուրբ կամքդ
չեմ կրնար ստանալ : Սակայն
Տէր իմ , մարդկային տկարու-
թիւնը քեզի անձանօթ չըլա-
լուն համար՝ կ'աղաչեմ , օգնէ

տկարութեանս եւ այս անըս-
տուգութեան վիճակէս որոշած
փառքիդ վերածէ, որ հոն դքեղ
որ հնելու արժանի ըլլամ. ամէն:



Իւցարեցի սեզանին առջեւ :




Զի՛ խնդրէք զկենդանին ընդ մեռեալս :

Տէր Յիսուս Քրիստոս, դուն որ վիշտերը փարատող և տրբաւ մութիւնները մխիթարող բարերար Փրկիչ ես, դուն որ իւղաբեր ջերմեռանդ կանանց սրտին սուգը փարատելու համար լուսափայլ հրեշտակիդ ձեռքքու փառաւոր յարութիւնդ աւետեցիր, դուն որ պարտիզպանի կերպարանօք Մագդաղենացւոյն տարակուսութիւնը լուծեցիր, կ'աղաչեմ Աստուած իմ, հաճութիւն ունեցիր իմ

յուսահատութիւնս, տրտմութիւնս և սրտիս տխուր թախծութիւնն ալ փարատելու. որ սկէս զի փրկութեան և երանութեան արժանանալու յուսովը լցուած, ուրախութեամբ մեկնիմ ասկէ եւ համարձակութեամբ Արարչիդ ոտքը դիմելու արժանի ըլլամ, եւ քեզ փառք ու գոհութիւն մատուցանեմ յաւիտեանս յաւիտենից. ամէն:





Փայտ կենաց է ամենեցուն :

Ա Ղ Օ Թ Ք Ժ Ը .

Գ Ի ւ ա խ ա չ Ի ջ ր ա յ :




Ատերութեան ոգին , որ մարդուս սրտին մէջ տարրացած էր , չը հաճեցաւ զբեղ տանջելով՝ խաչելով և թաղելով , այլ քու սուրբ խաչդ՝ որուն վրայ տարածեցար և զոր անպարտ արեամբդ օճեցիր , անհետացունելու համար հոս այս քարայրին մէջ թաղել տուաւ . որպէս զի անոր միջոցաւ յայտնուած սքանչելիքները խափանուին . Սա կայն դժտոյն Հեղինէ քու սուրբ սիրովդ վառուած՝ ջերմեռանդուութեամբ և կատարեալ հա-

ւատով իւր հոգւոյն թերադ-
րութեամբը եկաւ և այն պա-
պատուական գանձը գտնելով՝
մարդկանց մորութիւնն ու չա-
րամոռութիւնը յանդիմանեց :

Ես ալ նոյն անմիտ կիրքերով
պաշարուած, նախանձու և ա-
տելութեան ոգւով այլոց բա-
րեմասնութիւնները, երախտի-
քը, առաքինութիւնը և մարդ-
կութեան օգտակար գործքերը
վար ղարնելով կը ջանամ խա-
շիանել. բայց անոնց արդեամբը
միշտ կը յանդիմանուիմ ու չեմ
խրատուիր . չեմ յիշեր բնաւ
որ չը յայտնուած գաղտնիք մը
չը կայ :

Արդ՝ տէր իմ Յիսուս, հոգ-

ւոյս գեղեցիկ ձիւքերը՝ մոլու-
թեանց ձեռքով կորստեան փո-
սին մէջ արգիլեցի, եւ հիմայ
մերկացած այն վսեմ առօքի-
նութիւններէն՝ որովք մարդ-
կութիւնս կը սահմանուի, ան-
պիտան ու անարգուած մնա-
ցի : Արարչապետիդ ձեռագոր-
ծին ըսուելու պատիւէն զըր-
կուեցայ . վատթար գործերովս
ցածցայ, խանարհեցայ և խայ-
տառակ եղայ . և այս ամեն ա-
նարգութեանց մէջ կամուս գը-
լորեցայ . որոնցմէ փրկուելու և
սրբուելու յոյս դու միայն ես,
տէր իմ Յիսուս, ու քեզի կը
վայելէ փառք իշխանութիւն և
պատիւ յաւիտեանս, ամէն :



Եւ վերանայր յերկինս :

Ա Ղ Օ Թ Ք Ժ Թ .

ԶԽԹԵՆԵՍԿ շԵՑ
Սուրբ Համբարձման շրայ :



Ո՞ր մահկանացուին մտքէն
արժանաւոր խօսք կրնայ ծնիլ
քու յաղթութիւնդ ու փառքդ
գրուատելու Աստուած իմ Յի
սուս . ո՞ր բերան վայելասպէս
կրնայ դուիլ քու անձառելի
գործքերդ : Գուն՝ ո՞վ Տէր , ան-
բըննելի խորհրդով Աստուա-
ծութիւնդ մարդկութեան հետ
միաւորելով՝ իբր տկար մահ-
կանացու ծնար . աշխարհի մէջ
բնութենէ վեր վարքով մը կեն

ցաղավար, անբուժելի հիւանդ
դու թիւնները զօրութեամբ բը
ժշկեցիր, մեռեալներ ողջացու
ցիր, տրտմեալները մխիթարե
ցիր և երջանկութեան ճամբան
սորվեցուցիր :

Իսկ մարդիկ՝ քու այսչափ բա
րեացդ փոխան ի՛նչ հատուցին,
ո՛հ, սոսկալի ապերախտութիւն,
Կեանք տուողիդ կեանքը վեր
ցունենլու ճգնեցան, նախատե
ցին, չարչարեցին, խաչեցին, և
վերջապէս թաղեցին. բայց դու
հզօր զօրութեամբ յաղթութիւ
նըդ ընելէդ վերջը՝ անճառելի
փառօք դերեզմանէն ելար եւ
յամառեալ չար մարդկանց բռ
լորակնկալութիւնը փուճը հա

նեցիր, արդարոց և սրբոց յոյսը
պատկեցիր, և ՚ի լուսն ամենայ
նի հոս այս Զիթենեաց լերան
վրայ Առաքեալները օրհնեցիր,
զօրացուցիր եւ անոնց առջեւ
Աստուածային ինքնազօր զօրու
թեամբդ համբարձար դէպ ՚ի
երկինք քու սկզբնական փառա
ցըդ մէջ, ուր հիմայ նստած
տիեզերքը կը խնամես : Օրհ
նեալ ես դու Աստուած իմ,
մեծ է քու կարողութիւնդ, ան
ճառելի է մարդասիրութիւնդ
և սիրալի է նահատակութիւ
նըդ, որուն վրայ հրեշտակնե
րն ալ զարմացած՝ մէկմէկու
կը հարցունէին թէ “Ո՞վ է այս
փառաց թագաւորը և զօրու

Թեանց Տէրը, ինչ է անոր հան-
դերձին սքանչելի կարմրութիւ-
նը. և այսպէս հիացմամբ յա-
ւիտենից դռները քու առջեւդ
կը բանային :

Այսչափ մարդասիրական տը-
նորէնու թիւններդ յիշելով կը
հիանամ և կը պատկառիմ. ու-
րովհետեւ սիրոյդ անչափու-
թիւնը կը տեսնամ, և իմ կրիցս
բռնու թիւնը կը նկատեմ, և կը
յիշեմ որ բոլոր սարտականու-
թեանցս մէջ թերի գանուեր
եմ. փոխան սիրելու՝ ատեր եմ,
կարեկցելու տեղ՝ անարգեր եմ,
միտթարելու տեղ՝ վշտացուցեր
եմ, և ողորմելու տեղ՝ անգը
թաքար զըկեր եմ: Ուստի կ'ա-

զաչեմ տէր Աստուած բարու
Թեանց, Աստուած սիրոյ և ու-
ղորմութեան, գթա՛ մեղու-
ցեալ թշուառիս վրայ և գթու-
թեամբ ակնարկէ. սրբէ, փրկէ
և մեռեալ հոգիս կենացործե-
լով շնորհէ այն զօրութիւնը, ու-
րով դէպ ՚ի բեղ սլանալու կա-
րող ըլլամ, և դբեղ յաւիտեան
փառաւորելու արժանաւորիմ,
ամէն :






Քանդե եղև վերափոխեալ :

Ա Ղ Օ Թ Ք Ի .

Ծաւրք Աստուածածնի շիրմի շրայ :




Տիրածին կոյս , մայր ողոր
մութեան՝ սուրբ Աստուածա
ծին , դուն որ այնչափ առաքի
նացար՝ մինչեւ բանին Աստու
ծոյ մայր ըլլալու արժանացար .
Սերովդէից անհպե լին անճառա
պէս ծնար . բոլոր տիեզերքը
խնամող անկարօտ Տէրը սնու
ցիր : Դուն որ սուրբ Յովհան
նէս աւետարանչի միջոցով բո
լոր քրիստոնէից մայր ըլլալու կո
չուեցար , վերջապէս դուն՝ Սբ
բունհի կոյս , որ քու արժանա


ւորութեանդ համեմատ յեր-
 կինս վերախոխեցար, անշուշտ
 հիմայ մեզ համար միջնորդելու
 գերագոյն պաշտօնն ունիս, և
 ես կը հաւատամ, Տիրուհի մայր,
 որ քու աղաչանքդ մեր Փրկչին
 առջեւ խիստ ընդունելի է. այն
 Փրկչին՝ որ քեզի հետ կը շօշոր,
 ու քեզի հնազանդ կ'ըլլար. այն
 մարդասէր ու բարեխնամ Փրկչ-
 չին կ'ըսեմ, որ խաչին անտա-
 նելի ցաւոյ մէջ դքեզ չը մոռ-
 ցաւ. նոյն սիրոյ և գթութեան
 աղբիւրը, շնորհաց և ողորմու-
 թեան անսպառ գանձարանը,
 հիմա ալ քու մայրական սիրոյդ
 համար միջնորդութիւնդ ան-
 տես չընէր:

Արդ՝ Տիրուհիս, անարատ
 մայր, կ'աղաչեմ, տարածէ թե-
 ւերդ, խնդրէ, հայցէ եւ իմ
 փրկութեանս համար բարեխօս
 եղիր. և թէպէտ գիտեմ որ
 իմ մեղացս բազմութեամբը
 զրկուած եմ ամեն շնորհքներէ,
 համարձակութիւն չունիմ բան
 մը խնդրելու. Սակայն Թագու-
 հի երկնից, հոգւոյս կենսական
 պիտոյքը կըստիպէ զիս մերձե-
 նալ և քու հաճոյական մաղթա-
 նացդ ու միջնորդութեանդ դի-
 մել. ուստի մի մերժէր թշուա-
 ռըս, գթա ողորմելոյս վրայ.
 անարատ կուսութեանդ, գթած
 մայրութեանդ և Յիսուսի չար-
 չարանոց համար կըրած վշտա-

զիւր ցաւոյդ յիշատակաւը կ'ազաչեմ ու կը թախանձեմ, յուսարով որ կը ղեջանիս բարեխօսել մեղուցելոյս փրկութեանը համար. որով արժանի ըլլամ մեղաց թողութեան հետ՝ ժուժկալութիւն, շնորհք և սրբութիւն վարուց ընդունիլ, եւ սուրբ արքայութեան փառքը վայելել. ամէն:



Մուրք Երուսաղեմէն մեկնելու տակն:



Ո՛վ ամենակարող Արարիչ տիեզերաց, ո՛վ անհուն բարութիւն, ի՛նչ փառք և ի՛նչպէս գոհութիւն մատուցանեմ անարժան չըթամբս, մեծ է քու գթութիւնդ, անչափ է մարդասիրական խնամքդ, անկշռելի և անիոխարհիւնելի են առատ ու ձրի պարգեւներդ: Գուն, Աստուած իմ, որ չը մերժեցիր Քանանացւոյն աղաչանքը, մի մերժեր թշուառիս պաղատանքըն ալ, դուն՝ որ ընդունեցիր

հարիւրապետին խնդիրքը, հա-
ճութիւն ունեցիր նաեւ մեղա-
սարա ողորմելոյս հեծութեա-
նը վրայ. դուն՝ որ Պրոպատիկէ
աւագանին մէջ երեսուն և ութ
տարուան անձարակ անգամա-
լոյծին վրայ գթացար, ողորմէ ա-
նրդդ այսցեալ խղճալոյս. դուն՝
ամենակարող Փրկիչ իմ Յիսուս,
որ Մարիամու և Մարթայի ար-
տասուաց վրայ խանդաղատե-
լով՝ անոնց չորս օրուան մե-
ռած եղբայրը կենդանացու-
ցիր, կ'աղաչեմ ընդունէ իմ
ալ հառաչանքներս ու ար-
տասուքս, եւ բաղմաժամա-
նակեոյ մեռած հոգիս մեղաց
ապականութեան դուբէն հա-

նելով կենդանութիւն շնորհէ:
Փանքքեղ Փրկիչ և Սրարիչ,
գոհութիւն բիւր անգամ, որ
արժանի ըլիր զիս քու Տնօրինա-
կան տեղիքդ գալու և անձաւ
մարդասիրութեանդ հրաշալի
գործերը տեսնելու, զորոնք ինձ
նման ապաշնորհ մեղաւորին
փրկութեանը համար գթու-
թեամբ հաճեցար կատարել.
օրհնեալ ես դու Փրկիչ իմ Յի-
սուս, օրհնեալ ըլլայ քու կամքդ:
Կ'աղաչեմ Տէր իմ, թշուա-
ռիս մեղաց թողութեան հետ
շնորհէ նաեւ զիս ատողներուն,
թշնամիներուս, ինձի չար խոր-
հողներուն, չը գիտութեամբ
զիս բամբասողներուն յանցանքն

ալ: Ներէ անոնց կ'աղաչեմ, և մի յիշեր այն բոլոր գեշ խորհուրդները, զորս ինձ համար կը խորհին. տո՛ւր անոնց ալ Տէր իմ, զգաստութիւն, բարեմը տութիւն և սրտի մաքրութիւն, սղորմութիւն և շնորհքներուդ արժանի ըրէ զանոնք ալ: Ինչու որ Տէր իմ, գուցէ իմ անխոհեմ և գայթակղելի ընթացքովս տեղի տուած և պատճառեղած եմ անոնց մեղացը. ուստի իմ պատճառաւս ունեցած բոլոր մեղքերնին ալ մի յիշեր, և բու սուրբ արքայութեանդ անձառ փառաց արժանի ըրէ ամենքն ալ:

Ահաւասիկ տէր իմ Յիսուս

ալ ժամանակն եկաւ որ մեկնիմ այս Սրբազան տեղերէն: Սակայն սիրաս ու հոգիս միշտ հոս պիտի ըլլան, և այս յիշատակը զիս քեզի հետ պիտի միացունէ. միայն թէ Աստուած իմ, բու խնամոցդ ու շնորհացդ կը կարօտիմ. օգնէ տկարիս, որ չմտածելու առաջագրութեանս մէջ հաստատուն մնամ. պահպանող աջդ հովանի ըրէ վրաս ու փրկէ զիս բոլոր փորձանքներէն, որպէս զի խաղաղութեամբ հասնիմ իմ բնակարանըս, և զքեզ Հօր և Կուրծիդ շնորհքովս հետ փառաբանելու ամեն տեանս յաւիտեակ:



ՅԱՆԿ ԳՐՈՑ

ՏՊԱԳՐԵԱԼ

Ի ՎԱՆՍ ՍՐԲՈՅ ՅԱԿՈԼԻՅԵԱՆՑ*

Ա

	ԴՆ	ԻՐ
Ագնէս Հայ . գրով և Տաճ . լեզուաւ .	4	
Աղօթագիրք Սորաղան տեղեաց . աշխարհիկ լեզուաւ . յօժնեալ բարեպաշտ ուխտաւորաց համար . Պարիբրաբր .	2	
Ամեն մարդոց բարեկամք . կամ Առողջ ջական .	2	
Անուրջք 'ի Սիօն .	1	20
Աշխարհագրութիւն համառօտ .	7	
Առաքինութեան ճամբան կամ Մենտոր մանկանց .	7	
Աւետարան Ատնի .	30	
Աւետարան Իւզաբերից .	30	

* Աստղանիշով ելած գրքերն հարաւաստիւս են :
 Գրատեսչի իւրեք գինը որոշու է :

Աւետարան Չաշու .	30
Աւետարան առ ձեռն .	6
Աւետարան կամ Նոր Կտակարան .	12
Աւետարան ամենափոքր . ծոյ՛ :	8

Բ

Բանախօսութիւն Աշակերտուհեաց մէջ . Բ . Խիւ . 1874 .	1
Բարոյական պատմութիւններ .	7
Բացատրութիւն Հրաժարման և Զբոյժման՝ և առաւօտեան երբոց Շնորհալույն .	6

Գ

Գագիկ արքայ Հայոց .	5
Գիգր խօսակցութեան .	2
Գործք Առաքելոց .	6
Գործք առաքելոց ամենափոքր . ծոյ՛ :	8
Գործ սոկեղինիկ Սամուէլ Ռարբի հրբէի . աշխարհիկ լեզուաւ .	3
Գովասանք . Նոր Խիւ . Ս . Տեղեաց լեզայ .	3

Գ

Դասագիրք Ընթերցանութեան .
Դասագիրք Թուագիտութեան .

Ե

Եղիշէ պատմագիր .
Երեւոյթ կրօն .
Երկամեայ պանդխտութիւն 'ի Հա-
պէշտան . երկու հատոր .
— Նոյնին Գաղղիերէնը .
Երկու խօսք Եկեղեցա . համար .
Եփրեմ խաւրին . Ե . տիպ .

Զ

Զանազանութիւն հինգ դարուց Պատ-
մութիւն Հին և Նոր Արտակարանաց .
Տաճկերէն լեզուաւ . Պողոս Պատ-
րիարքի երեք հատորը մէկտեղ .

Ը

Ընդհանրական . թուղթք Ներսիսի
Շնորհալույս .

72 77
5 5
7 7
20 20
20 20
5 5
7 7
40 40
18 18

Թ

Թանգարան խրատու՝ Պողոս Պատրի-
արքի . Գ . ԿԻԿ .
Թախօրի տետրակ . Ս . Յակոբայ Ե-
կեղեցւոյ մէջ կատարուած Թա-
փօրներուն համար .
Թախօրի տետրակ՝ Տաշէլիան : Սուրբ
Յարութեան Տաճարին մէջ կատա-
րուած Թախօրներու սրարտղու-
թեանց համար .
— Նոյնն Շաբաթիան .

Ժ

Ժամագիրք Ատենի .
Ժամագիրք ո խորհրդի .
Ժամագիրք . Ծառի .

Խ

Խնդիր Սրբազան տեղեաց (*) .
Խորհրդածութիւն Սրբազան Պատա-
րագի . արարեալ սրբոյն Ներսէսի
Լամբրոնացւոյ .
Խորհրդատետր Սրբոյ Պատարագի .

72 77
18 18
4 4
5 5
2 20
50 50
20 20
16 16
5 5
10 10
10 10

Կ

	շ.	Գ.
Կարգադրութիւն առողջութեան .	5	
Կենսագրութիւն Բաղբալայ, աշխարհիկ լեզուաւ .	2	
Կաակազիր հոգեշահ բանից (՝) .	6	
Կրթարան Աւետարանական բանից .		
Տէրոյ՝ Ա. Սիմնն Պատրոս .	1	20
՝ Բ. Սամարացին .	1	20
՝ Գ. Արզիկ Աստուծոյ .	1	20
՝ Դ. Աման տնուշահաւտութեան .	1	20
՝ Ե. Անտարքէրութիւն կրօնի .	1	20
՝ Զ. Արատուք և Երգ .	1	20
՝ Է. Տաճարի քարերը .	1	20
՝ Ը. Հերման և Ոնեսիմ .	1	20

Հ

Համալուստ Քրիստոնէական .	4	
Հայերն վերայ . շախարհութիւն եօթըն մահացու մեղաց վրայ (՝) .	6	
Հեգերէն, Խաչագոր .	30	

	շ.	Գ.
Հենրիկոս և Մարիամ. վէպ կրթական՝ աշխարհիկ լեզուաւ .	2	20
Հրահանգ սիրոյ .	2	

Ղ

Ղերուբնոս Եգեթայի. և Եսայի կաթողիկոս Աղուանից .	3	
---	---	--

Ճ

Ճաշոց գիրք .	500	
Ճառ. Հաղորդութեան .	4	
Ճառք Ժառանգաւորաց .	30	
Ճարտասանութիւն առ ձեռն .	3	

Մ

Մտենագրութիւն նախնեաց .	6	
Մտթէոս Ուռհայեցի .	14	
Մարգարէական յարակցութիւն .	1	20
Մեկնութիւն Թղթոյն Էփեսացւոց .	25	
Մեկնութիւն Յայտնութեան .	10	
Միխայէլն Ասորոց Պատմութիւն .	12	
—Նոյնն հանգերձ ծանօթութեամբ .	16	

Յ

	շւ	էր
Յովհաննէս Կաթողիկոս , Պատմութիւն Հայոց . Բ . Գրք .	10	
Յովսէփ գեղեցիկ .	10	

Ն

Նարեկ , Մեծադէր .	12	
Նարեկ . Ծոյ՞ .	12	
Նոր Գասաղիքք Տիեզերագրութեան 'ի պէտս Ազգային դպրոցաց .	8	

Ո

Ողբերգութիւն 'ի մեծն Ներսէս (՞) .	4	
Ուխտ հայրենասիրի . Բ . Գրք 1874 .	1	
Ուսումն բարուց , թարգմանեալ յԻտալական լեզուէ (՞) .	18	
Ուսումն Պարտուց .	8	
Ուսումն Տրամաբանութեան թարգմանեալ 'ի Գաղ . լեզուէ .	5	

Պ

Պատասխանի Մտիթարաց բաճանայի .	4	
Պատմութիւն Ազգային .	6	

	շւ	էր
Պատմութիւն Եկեղեցական .	16	
Պատմութիւն Ս . Երուսաղէմի .	5	
Պատմութիւն Թաթարաց .	2	
Պատմութիւն Լենկթիմուրա .	10	
Պատմութիւն Նոր Կտակարանի .	7	
Պատմութիւն Ս . Գրոց , աշխարհիկ լեզուաւ , դպրատան տղոց համար .	8	
Պատմութիւն Ս . Լուսաւորչի , ՏՃ .	4	

Ս

Սաղմոս , Մեծադէր .	10	
Սաղմոս , Խաւրագիւր .	6	
Սաղմոս , Միջի .	6	
Սաղմոս , Պորադէր .	3	
Սաղմոս , ծոյ՞ , Տպեալ 1874 .	8	
Սիրուն Զբօսարան .	2	
Սիճն տարեկան կազմեալ 1866 թըլւականէն մինչեւ 1876 .	42	
Ստորագրութիւն Երուսաղէմի (՞) .	10	

Վ

Վաճառման վարդապետի առնադպրի Լեւոնի Արքայի բան 'ի յայտնու .		
--	--	--

Թիւն Տեառն և յօժուան Լեւոնի	2
Գ. արքայի .	6
Վարժու թիւն փոխասաց մանկանց .	

S

Տանվիլլ, տեղագրութիւն Երուսաղէմի (*).	5
Տարերք իմաստասիրութեան, թարգմանեալ յառաջական լեզուէ (*).	8
Տեսչութիւն հովուական .	8
Տօնացոյց .	10

Ք

Քերական Հայերէն .	20
Քերական Հայ—Գաղղիերէն .	2 20
Քերականութիւն Հայերէն .	4
Քերականութիւն Գաղղիերէն .	5
Քրիստանէական համառօտ, Հայերէն և Արաբերէն .	2

O

Oրացոյց .	1
-----------	---

32

0014770

2013

2001

« Ազգային գրադարան



NL0014770



00

197-42